ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/4210-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-133-14.01.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 175 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-133-14.01.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 15-րդ (պաշտպանի, մերձավոր ազգականների և այլ անձանց հետ տեսակցելը) հոդվածն ամրագրում է, որ քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունն օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ դրա մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Նախագծով առաջարկվում է օրենսդրի կողմից սահմանված բացառությունը, ըստ որի, ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունները, քննության շահերից ելնելով, կարող են արգելվել՝ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ օրենքով նախատեսված դեպքերում ընդլայնել՝ ավելացնելով օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերը:

2. Օրենքի 48-րդ (մուտքն ու ելքը ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր) հոդվածը նախատեսում է այն անձանց կամ մարմինների ցանկը, որոնք առանց հատուկ թույլտվության ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունք ունեն: Համանման կարգավորում է նախատեսված նաև Քրեակատարողական օրենսգրքում՝ պատիժը կատարելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունքի մասով:

Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 48-րդ հոդվածով նախատեսվում է այն անձանց կամ մարմինների ցանկը, որոնք առանց հատուկ թույլտվության կամ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակումների վերացման՝ ձերբակալվածներին պահելու վայր կամ կալանավորվածներին տեսակցելու, ինչպես նաև նրանց պահելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունքունեն:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է հետևյալ նկատառումները՝

Օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված օրենքով նախատեսված բացա-ռությունները վերաբերելի են միայն փաստաբաններին, Մարդու իրավունքների պաշտպանին, Պաշտպանի ներկայացուցչին, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողին, կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման պետական ծառայողներին և փորձագետներին, որոնց Պաշտպանի գրավոր որոշմամբ սահմանված կարգով և ծավալով վերապահվում են Պաշտպանի լիազորությունները: Այդ իրավունքներն ամրագրված են նաև համապատասխան օրենքներով, մասնավորապես՝

1) «Փաստաբանության մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանն իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման: Նույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն

տրամադրելու հնարավորությամբ պետական մարմիններում և հիմնարկներում, տեղական ինքնակառավարման մարմիններում, այդ թվում՝ դատական մարմիններում: Պետական և դատական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ապահովելու փաստաբանի՝ վստահորդի հետ առանձին, անարգել և մեկուսի հաղոր-դակցվելու իրավունքը.

2) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ սահմանադրական օրենք) 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, դրանց պաշտոնատար անձինք կամ ներկայացուցիչները պարտավոր են երաշխավորել ազատության սահմանափակման կամ ազատությունից զրկման վայրում գտնվող անձի հետ Պաշտպանի կամ նրա ներկայացուցչի անարգել և խորհրդապահական կարգով հաղորդակցվելու հնարավորությունը: Նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է իր ընտրությամբ խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) և անարգել տեսակցելու ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև առանձնազրույցներ ունենալու նրանց հետ, համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ, անհրաժեշտության դեպքում ներգրավել թարգմանիչ, օգտագործելու տեխնիկական միջոցներ: Առանձնազրույցները ենթակա չեն միջամտության կամ գաղտնալսման որևէ մարմնի կամ երրորդ անձի կողմից:

Օրենքի 48-րդ հոդվածով սահմանված անձանց ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր մուտք գործելը հետապնդում է ընդհանուր վերահսկողական նպատակ, օրինակ՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց նյութակենցաղային կամ բուժսանիտարական պայմանները դիտարկելու, նրանց տրամադրվող սննդի, հիգիենայի կամ այլ պարագաների տեսականին և քանակը պարզելու համար և այլն:

Սակայն, կոնկրետ ձերբակալված կամ կալանավորված անձի հետ տեսակցելու իրավունքը սահմանափակելը նպատակ է հետապնդում, քննության շահերից ելնելով, վարույթ իրականացնող մարմնի կողմից կիրառվող սահմանափակումներին:

Հաշվի առնելով «Նորմատիվ իրավականակտերիմասին» օրենքի 41-րդ հոդվածով սահմանված նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանման կանոնները՝ կարող ենք փաստել, որ «տեսակցություն» և «անարգել մուտք և ելք» հասկացությունները տարբեր իրավական բովանդակություն ունեն և որևէ կերպ չեն նույնանում: Ասվածն ամրապնդվում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթով, ըստ որի նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ օրենսդիրը քննարկման առարկա երկու հասկացությունները նույնացնելու նպատակ չի հետապնդել, և թերևս դա է պատճառը, որ օրենքում սահմանվել են միմյանցից տարբեր երկու ռեժիմներ, այն է՝ տեսակցությունն ու անարգել մուտք և ելքը:

Այդ առումով տեղին է նշել, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ դատավորին ազատությունից զրկած մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և մյուս անդամների անարգել մուտքն այն վայր, որտեղ պահվում է ազատությունից զրկված դատավորը, և ապահովել նրանց տեսակցությունը դատավորի հետ, եթե Բարձրագույն դատական խորհրդի տվյալ անդամի վերաբերյալ քրեական հետապնդման մարմինը տեսակցությունը սահմանափակող որոշում չի կայացրել:

Նույն տրամաբանությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարա-դատության

նախարարության քրեակատարողական ծառայության պահպանության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» N 195-Ն հրամանի 68-րդ կետում հստակ տարանջատում է դրվում՝

1) մուտքի և ելքի իրավունքի և

2) տեսակցություն ունենալու իրավունքի միջև՝ սահմանելով, որ՝

«Յուրաքանչյուր անձի մուտքը հիմնարկի կալանավորված անձանց կամ դատապարտյալների բնակության տեղամաս իրականացվում է սահմանված կարգով տրված թույլտվության հիման վրա՝ բացառությամբ օրենքով նախատեսված առանց հատուկ թույլտվության անարգել մուտքի և ելքի իրավունք ունեցող անձանց և տվյալ հիմնարկի ծառայողների ու վարձու աշխատողների: Հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների բնակության տեղամաս մուտքի և ելքի իրավունքը չի ենթադրում կալանավորված անձանց կամ դատապարտյալների հետ տեսակցություն ունենալու իրավունք: Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ տեսակցությունները տրամադրվում են օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:»:

Ասվածից հետևում է, որ կալանավորվածներին պահելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունքը ենթադրում է միայն առանց հատուկ թույլտվության քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների բնակության տեղամաս մուտքի և ելքի իրավունքը: Ըստ այդմ, վերջինս չի ընդգրկում անարգել ազատությունից զրկված անձանց հետ տեսակցություն ունենալու իրավունք, եթե առկա է տեսակցությունն արգելելու վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշում: Հետևաբար, քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ տեսակցությունն արգելելու վերաբերյալ որոշման առկայության պայմաններում ազատազրկման վայր մուտքի և ելքի իրավունք ունեցող անձանց չի թույլատրվում տեսակցել կալանավորված անձի հետ:

Ըստ այդմ՝ նախագծով առաջարկվող՝ բացի փաստաբանից, Մարդու իրավունքների պաշտպանից և նրա իրավասու աշխատակցից այլ անձանց համար առանց Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակումների վերացման ձերբակալված կամ կալանավորված անձին տեսակցելու կարգավորումը նախատեսելը չի բխում օրենսդրության տրամաբանությունից, ինչպես նաև կոնկրետ հոդվածի էությունից: Այս համատեքստում հարկ է նշել նաև, որ նախագծի հիմնավորումներում որպես առաջարկվող կարգավորման համանման օրինակի՝ հղում է տրվել Ռուսաստանի Դաշնության «Հանցագործությունների կատարման մեջ կասկածվող և մեղադրվող անձանց կալանքի տակ պահելու մասին» դաշնային օրենքի 7-րդ հոդվածին, մինչդեռ, մատնանշված հոդվածում խոսքը վերաբերում է միայն առանց հատուկ թույլտվության ազատությունից զրկելու վայրեր այցելությանը, որն ըստ էության նախատեսված է նաև օրենքի 48-րդ հոդվածի ներկայիս խմբագրությամբ:

Հատկանշական է նաև, որ գործող օրենսդրությամբ արդեն իսկ առկա են հստակ կառուցակարգեր, որոնք միտված են երաշխավորելու ազատությունից զրկված անձանց իրավունքների ենթադրյալ խախտումների հայտնաբերումն ու հետագա կանխումը: Մասնավորապես, օրենքի մակարդակով առանձնացվել է սուբյեկտային այնպիսի կազմ, որի դեպքում գործնականում հնարավոր է երաշխավորել ազատությունից զրկված անձանց իրավունքի ցանկացած խախտման բացահայտումն ու դրա ուղղությամբ հետագա քայլերի ձեռնարկումը: Սուբյեկտային նշված կազմում ընդգրկելով Պաշտպանին և փաստաբանին՝ օրենսդիրը հիմքում դրել է այն հանգամանքը, որ նշված անձինք անմիջականորեն (ոչ միջնորդավորված եղանակով) կարող են ապահովել ենթադրյալ խախտման դեպքի հետագա ընթացքը: Այլ կերպ, մի դեպքում՝ ազատությունից զրկված անձի փաստաբանը, լինելով իր վստահորդի շահերի պաշտպանը, վստահորդի անունից լիազորված է կատարելու այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են

խախտված իրավունքների վերականգնմանը, իսկ մյուս դեպքում՝ Պաշտպանը սահմանադրական օրենքով իրեն վերապահված լիազորությունների ուժով կարող է բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ սկսված քննարկման արդյունքում արձանագրել մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում:

Ինչ վերաբերում է այլ անձանց, ապա վարույթն իրականացնող մարմնի համապատասխան արգելքի բացակայության պայմաններում նրանց տեսակցությունները ձերբակալված կամ կալանավորված անձի հետ կարող են տեղի ունենալ ընդհանուր կարգով՝ չազդելով տրամադրվող տեսակցությունների քանակի վրա:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 175 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-133-14.01.2022-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.02.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-133-14.01.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված եւ կալանավորված անձանց մասին» Հայաստանի Հանրապետության՝ 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 9-րդ պարբերությունում «օրենքով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել «սույն օրենքի 48-րդ հոդվածով սահմանված դեպքերի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 48-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

Հոդված 48. Մուտքն ու ելքը ձերբակալվածներին պահելու վայր եւ կալանավորվածներին պահելու վայր

1. Ձերբակալվածներին պահելու վայր եւ կալանավորվածներին պահելու վայր մուտքի եւ ելքի կարգը սահմանում է պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը:

2. Առանց հատուկ թույլտվության կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակումների վերացման՝ ձերբակալվածներին կամ կալանավորվածներին տեսակցելու, ինչպես նաեւ նրանց պահելու վայր անարգել մուտքի եւ ելքի իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորը, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը կամ նրա համապատասխան տեղակալը.

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, նրա տեղակալները, ինչպես նաեւ այն դատախազները, ովքեր օրենքով սահմանված կարգով հսկողություն են իրականացնում պատիժներ եւ հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու նկատմամբ.

3) ձերբակալվածներին պահելու վայրի եւ կալանավորվածներին պահելու վայրի վերադաս մարմինների պաշտոնատար անձինք.

4) միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա.

5) Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավասու պետական ծառայողները եւ հայեցողական պաշտոն զբաղեցնող իրավասու անձինք, ինչպես նաեւ կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները.

6) Հայաստանի Հանրապետության այն դատավորները, ովքեր օրենքով սահմանված կարգով քննում են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու կամ կալանքի տակ պահելու օրինականության հետ կապված հարցերը, ձերբակալված եւ կալանավորված անձանց իրավունքների եւ ազատությունների խախտման, ինչպես նաեւ ձերբակալվածներին պահելու վայրի եւ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի այլ գործողությունների դեմ բողոքները.

7) սույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված՝ արգելանքի եւ կալանքի տակ պահելու կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդները:

3. Օրենքով նախատեսված դեպքերում առանց հատուկ թույլտվության ձերբակալվածներին պահելու վայր եւ կալանավորվածներին պահելու վայր անարգել մուտքի եւ ելքի իրավունք կարող է տրվել նաեւ այլ անձանց:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից ձերբակալված եւ կալանավորված անձանց հետ տեսակցությունները չեն ազդում սույն օրենքով սահմանված՝ ձերբակալված եւ կալանավորված անձանց տրամադրվող տեսակցությունների քանակի վրա:

5. Ձերբակալվածներին պահելու վայր եւ կալանավորվածներին պահելու վայր մուտք եւ ելք գործող անձը, ինչպես նաեւ նրա իրերը ձերբակալվածներին պահելու վայրի եւ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի կողմից կարող են ենթարկվել զննության:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ներկայիս իրավիճակը եւ խնդիրները
«Ձերբակալված եվ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Առանց հատուկ թույլտվության ձերբակալվածներին պահելու վայր եւ կալանավորվածներին պահելու վայր անարգել մուտքի եւ ելքի իրավունք ունեն՝
1) Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորը, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը կամ նրա համապատասխան տեղակալը.
2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, նրա տեղակալները, ինչպես նաեւ այն դատախազները, ովքեր օրենքով սահմանված կարգով հսկողություն են իրականացնում պատիժներ եւ հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու նկատմամբ.
3) ձերբակալվածներին պահելու վայրի եւ կալանավորվածներին պահելու վայրի վերադաս մարմինների պաշտոնատար անձինք.
4) միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա.
5) Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավասու պետական ծառայողները եւ հայեցողական պաշտոն զբաղեցնող իրավասու անձինք, ինչպես նաեւ կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները.
6) Հայաստանի Հանրապետության այն դատավորները, ովքեր օրենքով սահմանված կարգով քննում են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու կամ կալանքի տակ պահելու օրինականության հետ կապված հարցերը, ձերբակալված եւ կալանավորված անձանց իրավունքների եւ ազատությունների խախտման, ինչպես նաեւ ձերբակալվածներին պահելու վայրի եւ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի այլ գործողությունների դեմ բողոքները.
7) սույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված՝ արգելանքի եւ կալանքի տակ պահելու կատարման

նկատմամբ վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդները:»
Սույն հոդվածը ենթադրում է դրանում թվարկվող անձանց կողմից անձի պահման պայմանների ծանոթացման հնարավորություն, ինչից ուղղակիորեն բխում է, հոդվածում թվարկվող անձինք պետք է նաեւ տեսնեն՝ տեսակցեն ձերբակալվածին կամ կալանավորվածին, ինչը սակայն, պրակտիկայում չի իրականացվում վարչակազմի կողմից օրենքի սխալ մեկնաբանման եւ կիրառման արդյունքում:
Իրավակիրառ գործունեության ընթացքում ձերբակալվածներին պահելու վայրի եւ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերը, խեղաթյուրելով օրենքի բուն էությունը, կարգավորման նպատակը եւ կարգավորման առարկան, թույլ չեն տալիս ձերբակալվածների կամ կալանավորվածի պահման վայր առանց հատուկ թույլտվության մուտք գործելու իրավունք ունեցող անձանց ծանոթանալ նրանց պահման պայմանների հետ հենց ձերբակալվածների կամ կալանավորված անձանց ներկայությամբ, ինչով իմաստազրկվում է անարգելք մուտք գործելու՝ տեսակցելու կարգավորման նպատակը եւ նշանակությունը:
Մյուս կողմից նման անհիմն եւ ըստ էության օրենսդրությունից չբխող սահմանափակումը չունի որեւէ հիմնավորում, քանի որ անարգել մուտք գործելու այս լիազորությունը տրված է բարձրաստիճան պաշտոնատար անձանց, դատախազների, ՄԻՊ-ին եւ իր աշխատակազմին, միջազգային կազմակերպություններին եւ օրենքի 47-րդ հոդվածով սահմանված՝ արգելանքի եւ կալանքի տակ պահելու կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդներին, այսինքն սրանից տրամաբանորեն հետեւում է, որ եթե վարչակազմը արգելում է 48-րդ հոդվածով նշված անձանց տեսնել ձերբակալվածին կամ կալանավորվածին, ապա լինելով պետության ներկայացուցիչ վարչակազմը փաստորեն կա՛մ չի վստահում իր գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթներ ունեցող մարմիններին, կա՛մ չի վստահում դատավորներին, կա՛մ էլ նույնը դրսեւորում է ՀՀ-ում գործունեություն ծավալող, գործունեությունը չարգելված կամ չկասեցված եւ միջազգային կարգավիճակ ունեցող կազմակերպություններին, ինչը պետության ամբողջական, ինստիտուցիոնալ եւ արդյունավետ կառավարման տեսանկյունից անընդունելի եւ անըմբռնելի է:
Ընդ որում՝ 48-րդ հոդվածով նշված տեսակցելու լիազորությունը փաստացի արձանագրված է նաեւ նույն հոդվածի 4-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից ձերբակալված եւ կալանավորված անձանց հետ տեսակցությունները չեն ազդում սույն օրենքով սահմանված՝ ձերբակալված եւ կալանավորված անձանց տրամադրվող տեսակցությունների քանակի վրա:
Հարկ է նշել, որ սույն կարգավորումը նույնական չէ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ՄԻՊ-ի համար երաշխավորված տեսակցության հետ, քանի որ սահմանադրական վերաբերելի օրենքով նախատեսված լիազորության իրականացման դեպքում տեսակցությունը կոնֆիդենցիալ՝ խորհրդապահական կարգով է իրականացվում, մինչդեռ նախագծի կարգավորման իրավահարաբերությունների դեպքում տեսակցությունը իրանացվում է ՔԿՀ վարչակազմի աշխատակիցների ներկայությամբ:
Մինչդեռ, ցավոք սրտի, կրկին անգամ պետք է ընգծել, որ ՔԿՀ վարչակազմերի կողմից օրենքը մեկնաբանվում է իր էությանն ու նպատակային մեկնաբանությանը ոչ համահունչ եւ դրան տրամագծորեն հակառակ, ինչով խախտվում են 48-րդ հոդվածով սահմանված անձանց իրավունքները, անհիմն ու փաստացի ապօրինի սահմանափակվում են նրանց լիազորությունները, իսկ ձերբակալված կամ կալանվորված անձինք զրկվում են օրենքով իրենց համար երաշխավորված հնարավորությունից՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց եւ միջազգային կազմակերպությունների աշխատակցիներին իրենց իրական՝ փաստական իրավիճակի վերաբերյալ տեղեկություններ մատուցելու հնարավորությունից:
Հետեւաբար մի կողմից սույն խնդիրը կարգավորելու, մյուս կողմից իրավունքի հայեցողական դրսեւորման չարաշահում թույլ չտալու համար առաջարկվում է ընդունել սույն օրենքի նախագիծը:
Նախագծով առաջարկվող կարգավորումները.
Նախագծով առաջարկվում է օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը համապատասխանեցնել նույն հոդվածի 4-րդ պարբերությանը՝ իրավական որոշակիության ամբողջական ապահովման (այդ թվում՝ իրավակիրառ պրակտիկայում), ինչպես 48-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված անձանց լիազորությունների անխափան եւ անարգել

իրականացման համար:
Նախագծով լուծվող այլ խնդիրներ. Նախագծով առաջարկվող տեսքով շտկվել եւ «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին ու դրա պահանջներին համահունչ փոփոխվել է օրենքի 48-րդ հոդվածը:
Միջազգային փորձ՝ համառոտ. Համանման օրենսդրական կարգավորումներ են սահմանված նաեւ ՌԴ1 եւ ԱՊՀ անդամ այլ երկրներում: